

5. Ս. Նիկողայոս վանքի շինարարութիւնները.

Այս վանքին մէջ աւելի կանուխ կատարուած շինարարութիւնները մեզ անծանօթ կը մնան: Եղիազար պատրիարք 1663ին Յոպպէի մէջ ուրիշ տուններու եւ տեղերու հետ կը գնէ Գազալի կառավարիչին չորս մթերանոցները, որ մօտ էին այն տեղոյն, ուր Ս. Պետրոս առաքեալ չորս ծայրերէն կախուած կտաւին տեսիլը ունեցաւ. այս տեղ կը գտնուէր նաեւ Սիմոն խաղախողին տան մէկ մասը, որ ի հնումն եկեղեցիի վերածուած էր. այս մթերանոցներուն տեղը կանուխէն հայոց գերեզմանատուն էր, ինչպէս ցոյց կու տան հեռանկարները. եկեղեցիին մէկ մասը մզկիթ եղած է: Այս շինութեան մասին աւելի որոշ կը գրէ Հաննէ (Պասմ. Երուսաղէմի, էջ 66) «Աստ գոյ վանք մի ազգիս Հայոց, գեղեցիկ իջևան տէրունական ուխտաւորաց, եւ ունի հոգետուն մի պայծառ լուսամտօք, և է մեծ մխիթարութիւն մեզ: Ի միջի սորա շինեալ էին փայտաշէն կամարք ցածք յեղիազար Հոգևոր տիրէն հեղինակէ այսմ վանից, և էին յոյժ հնացեալք»:

1717ին Գրիգոր Շղթայակիւր և Յովհաննէս Կոլոտ պատրիարքները ազգայիններէ հաւաքուած գումարով Յոպպէի մէջ կը գնեն երեք մթերանոցներ և անոնց վրայի սենեակները զոր կը կցեն վանքին. կը գնեն նաեւ ծովեզերքը, վանքին դիմաց գտնուած հացի փուռն զոր յետոյ ուրիշներ կը յափշտակեն:

1727ին ժամանակին երեւելիներէն Սեղբատրոս կամ Սեղբոս ամիրա Երևաննց, Ակնցի (* 1754 փետր. 5) ուխտի կու գայ Երուսաղէմ և շատ մը կարևոր յիշատակներ կը թողու Ս. Յակոբեանց վանքին մէջ եւ Սուրբ Տեղերուն. ամիրան Յոպպէի մէջ ծախու կ'առնէ նաեւ պարտէզ մը հայոց գերեզմանատան մօտիկ. քաղաքին մէջ ալ իջևան մը կը շինէ, ու անոր տարեկան վարձքը վանքին պէտքերուն կը յատկացնէ, ինչպէս կը ցուցնէ նոյն իջևանի բարաւորին վրայի հետեւեալ արձանագրութիւնը (Տե՛ս Սաւարսևեանց, Բ. Հտր. էջ 710). «Յիշատակ է խաւնրս եւ Հայոց գերեզմանի մօտ եղեալ պարտէզն Ակնցի Երեւանեանց յուսանողի Իմիկ որդի մահեսեպի Սեղբատրոսին, որ յիւր արդեսանց արար զսոսս յիշատակ Ս. Յակոբայ, Ս. Յարութեան, Ս. Ծննդեան, Ս. Աստուածածնի, Ս. Փրկչի, Ս. Հրէշտակապետ վանքերուն, այսու պայմանաւ որ զիմ հիկ եւ նոր ներդեցեալս անկե՛ or անեսն արդոյ